ՀԱԲԻԲ-ԲԷԿ ՄԱՀՄՈՒԴԲԷԿՈՎԻ ՃԱՌԸ

(Ընտասանված Օշականում տոնական հանդէսին)

Ինձ ուղարկել է Բագու քաղաքի մահմեդական ազգաբնակութիւնը, որպէսզի այս փայլուն, հանդիսաւոր օրը, հայ ժողովրդի կուլտուրական տօնին, մատուցանեմ եղբայրական ու ամենաանկեղծ շնորհաւորումներս։

1500 տարի առաջ ս. Մեսրոպի և ս. Սահակի ձեռքով կազմակերպվեց վերջնականապէս հայկական այբուբենը և այդպիսով դրվեց հիմքը հինաւուրց հայկական կուլտուրայի, որ այդ ժամանակից կիրառվում է գրագիտութեան անսասան հողին։ Հայ գրականութիւնը սկսեց փայլուն կերպով զարգանալ և տուեց մարդկութեան մի շարք գնահատելի աշխատանքներ կրօնական ու սոցիալական կեանքի շրջանում։ Սակայն հայ գրականութեան ամենահզօր խթանը եղաւ 400 տարի մեզանից առաջ, երբ առաջին անգամ Վենետիկում գործի հանվեց հայկական առաջին տպարանական մամուլը։

Այդ օրը յիրաւի լոյսի յաղթանակի օրն էր խաւարի դէմ, հայ գրականութեան մեծ տօնը։ Իսկ մեզ մահմեդականներիս համար, որ բազդի կամքը բազում դարեր միացած ենք պատմականօրէն ու աշխարհագրօրէն հայ ժողովրդի հետ, այդ տօնը ստանում է առանձին գնահատութիւն ու հանդիսաւորութիւն։